

ՄՈՒՆՁ

Հը՛ 22... հո՛ւֆֆ... շրթներովը շնչաց հարսը՝ գլխովը երդըբնակը ցույց տալով:
Կեսուրը, որ նստած էր քյուրսիին վերի եզերքը ու կտաքնար, նույնպես նայեցավ ձեղունին կեղրոնի լուսամուտին ու հարցուց.

- Դուրսը՞ ըսել կուգես, օդը ավրվեցա՞վ նորեն:

- Ը՛ֆֆ... - շնչաց հարսը: Այո՛, ըսել կուգեր:

Ու բուրդմանիկին թելը ուսին նետելով, ձեռքովը հաստ հողպատին մյուս կողմը ցույց տվավ, ուր պարտեզն էր: Հետո մատներովը արագորեն կարգ մը ձևեր գծեց օդին մեջ, ու երկու ձեռքերը իրարու միացնելով կրկին ու կրկին շարժեց:

- Բարտիներուն վրա ագռավները թառեր են. շա՛տ են. մեկ ձայն կկանչե՞ն, - հարցուց նորեն կեսուրը:

- Ը՛ֆֆ...

- Որ այդպես ագռավները թառեր են ու մեկ ձայն կկանչեն, ըսել է թե նորեն ձյուն պիտի գա, - եզրակացուց պառավը:

Լռություներ վերսկսավ: Սովերները տակավ թանձրացան թոնրատան մեջ, պառավը գլուխը կախեց քյուրսիին մթելին վրա, մրափելու համար, ու աղջնակ մը, որ նույնպես նստած էր ոտքերը թոնիրին մեջ, սկսավ խաղալ տիկնիկի մը հետ:

Հարսը նայեցավ լաչակներուն ներքենն կեսրոջը ու շարունակեց մանելը: Ան կայնած էր քյուրսիին վարի եզերքը քուրջն ներքնակի մը վրա ու երկու կծիկներու թելերը իրարու կմիացներ, զույգ թել կընէր: Ամեն անգամուն երկայն բուրդմանիկը կքսեր կուշտին սեկե փոքր գոգնոցին, հետո կբարձրացներ օդին մեջ, որ թափ առնելով, զարմանալի արագությունով կսկսեր դառնալ, տակավ երկարելով ու իջնալով գետին: Մանածը կփաթթեր, հետո նորեն կշարունակեր:

- Ալութային գոմը ավրլեցի՞ր, - խոսեցավ կեսուրը դադարե մը հետո, - մաքիներուն առաջքը ցախ դրի՞ր, որ ուտեն:

Հարսը գլուխը շարժեց, ու աղջնակին ականջին հակելով չլսելու աստիճան ցած ձայնով մը, հասկցուց, թե ըրած էր:

- Խաթումամ, ըրի՛ կըսե, ավլեցի, կերերնին տվի, - հայտնեց փոքրիկը մամուն, խաղալով միաժամանակ իր տիկնիկին հետ:

- Ան տղա՛ն ինչ եղավ, մտիկ չըրավ ու ասանկ օդով՝ ելավ գնաց, - շարունակեց պառավը իր տղուն՝ հարսին ամուսնին ականարկելով:

- Խաթումամ, հայրիկս աս գիշեր պիտի գա, - պատասխանեց աղջնակը, մորը կողմե խոսելով:

- Աղջի, օտար տան ցախավել, ջրի վար տամ քեզ, ըսե թե այս գիշեր պիտի չգա, - հոժեց հարսը իր աղջկանը, - խո՞ւլ ես, ինչ ես:

Փոքրիկը ուղղեց, ըսավ թե՛ այս գիշեր պիտի չդառնա իր հայրիկը, հոն պիտի պառկի:

Պառավը սկսավ մտահոգվիլ: Բարով չըլլար այդ աղվեսի որսորդությունը... Գիշերը պիտի լուսըննե ձորերուն մեջ, ձյուններուն վրա,

ակռան ակռային պիտի զարնէ, դողա, ինչո՞ւ. լուսունկի լուսուն աղվեսները պիտի գան, որ զարնէ: Կրնա՞ որ պաղ առնէ, հիվանդանա, ճամբաներն ալ ձյունը պիտի գոցէ, վաղը ինչպե՞ս պիտի դառնա:

– Ի՛ՖՖ... ի՛շշ... – շնչաց հարսը, ձեռքը շարժելով, ուզելով հանդարտեցնել կեսուրը:

– Կուգա... հո՞գո է որ, – պատասխանեց կեսուրը, – ցա՞վն ես քաշեր, մա՞յրն ես, որ սիրտդ ցավի, օտար աղջիկ չե՞ս, աղբարը պազիրկյան ըլլա՞ յարն ուրախանա, աղբարն աղքատանա քույրը տերտովն ըլլա:

– Ըհը... ֆո՛ւ... – ըսավ հարսը, վշտանալով կեսրոջ խոսքերէն, ու դեմքը դարձնելով:

Թոնրատունը ա՛լ ավելի մթնեց: Այն պահուն կովու մը բառաչունը լսվեցավ, հեղ մը դադրեցավ, հետո նորէն սկսավ: Տանը կից գոմէն կուգար ձայնը:

– Կերևա թե՛ կովուն ցավերը շատցան, – ըսավ կեսուրը, հարսին հասակին նայելով, – մինչև իրիկուն կըլլա որ՝ կծնի, իրիկվընէ ադէկ մը ուրը իջեցուցեր էր, բերեր ու ազատեր հեղ մը, անասուն է, մեղք է, անլեզու է... Առտուն ջուրը չտանէիր՝ ադէկ կըլլար, պաղ ջուրը կդպի, պիտի ըսէի իսկ, անցավ, մոռցա:

– Խաթումամ, առտուն Խորո աղբորս հետ ջուրը տարինք, ալութան խմեց, էշը խմեց, մոզիները խմեցին, ան չխմեց. կայնեցավ, կայնեցավ գուռին վրա, ետ դարձավ, – հարեց փոքրիկը:

– Ադէկ որ չխմեց, – պատասխանեց պառավը, ու խոսքը հարսին ուղղելով, – բոլկին մեջ ալ ջուր չկար, կովն որ ծնի՝ ի՞նչ պիտի տաս, քիչ մը տաք ապուր եփե, որ խմցնես, մենք ալ խմելու ջուր չունինք. երթայիր կթոց մը ձյուն բերէիր, հալեցնէիր, անուշ ջուր ըլլար:

– Ը՛ՖՖ... ի՛ս... – շնչաց հարսը գլուխը շարժելով ու ձեռքովը զինքը ցուցնելով, ուզելով հասկացնել, թե ինք գիտէ, միտքն է, պիտի երթա, կծիկներուն լմնալուն կսպասէ:

– Մինա՞կդ պիտի երթաս, – հարցրուց պառավը, – ո՞ւր է, Խորո՞ն ուր է:

– Խաթումամ, Խորո աղբարս Սերոյենց կալին տակը ճնճողուկ բռնել գնաց, – ըսավ աղջնակը, տիկնիկին երկու թևիկներէն բռնած՝ օդին մեջ շարժելով:

Խորոն հարսին անդրանիկն էր, որ տասը տարեկան մը կար:

– Ալ ի՞նչ հոգ ունինք որ, – հարեց պառավը, – ոտքերը չարոխ չկա, գուլպայով մը, ձյուններուն ու ջրերան մեջ, գիշերը մինչև լուս բրիռ և-բրիռ և կհագա, հիմա ալ ելեր՝ ճնճող բռնել կերթա... ամռան ետին աշուն է, աս փոկն ալ ան կաշուն է, հայրը աղվես պիտի բռնէ, տղան ալ ճնճող... մեկն ալ տալդ է, առտուն գացեր, օրհարսակը անցավ, օրը կկործի, համարե իրիկուն կըլլա, չէ եկեր. խենթն է գացեր հարսնետունը, ըսեր է՝ աս ադէկ է, քան զմեր տունը... աղջղջի անանկ աղջիկը, ջրի վար տամ ու ջրի վեր ժուռ, գամ, վաղը հարս որ ըլլա՝ կտեսնեմ պոյր:

Ու նայելով հարսին փորին, որ կգոգանար կարմիր գծավոր էնթարիին ներքն, շարունակեց.

– Մինակդ չես կրնար, ձյունով լեցուն կթոցը ի՞նչպես պիտի վերցնես ու շալկես, ծոցվոր ես, ետքի շաբաթներդ է, կրնա՞ս որ՝ գլուխդ փորձանք մը բերես:

– Խաթումամ, ես երթա՞մ հարսիկիս հետ, – ընդմիջեց աղջնակը.

– Դուն չես կրնար, ձագուկս, քուլա ըլլա մամը քեզի, – պատասխանեց պառավը, – մեծերը, մեծ քարն ի վար իյնան, անոնք չեն երթար, դուն երթաս՝ ի՞նչ ընես:

Բայց հարսը, որ բուրդմանիկը քյուրսիին վրա դրավ՝

– Ի՞նչ... ֆյու... ըրավ կետրոջը, հասկցնելով, թե ինք մինակը կրնար վերցնել ու շալկել, օգնության կարոտ չէր:

Ու օձախին անկյունի ոգոռիէ հյուսված կողովը կժշվանով մը շալկեց, թին առավ ու դուրս ելավ:

Լռությունը նորեն տիրեց տան մեջ: Փոքրիկը շարունակեց իր խաղը. ան մերկացուցեր էր, ու կրկին կհագցներ իր տիկնիկը, իսկ պառավը քնացավ:

Քիչ հետո հարսը ձյունով լեցուն կողովը շալակը, թին ձեռքը՝ մտավ ներս: Չնայած շալակին ծանրությանը՝ ան ուժեղ, հաստատ քայլերով կհառաջանար: Ձեռքերն ու այտերը կարմրեր էին ցուրտէն:

Կովը այլևս չէր բառաչեր:

– Աղջի հարսնուկ, – ձայնեց կեսուրը, որ արթնցավ, – կովը ա՛լ չպոռչեր, հեղ մը երթայիր, նայէիր՝ ի՞նչ եղավ:

Ձյունով լի կողովը օձախին առաջքը դրավ հարսը ու անհայտացավ: Փոքրիկն ալ տեղէն ցատկեց ու հետևեցավ իրեն:

– Խաթումամ, Խաթումամ, – քանի մը ըտպէ հետո վազելով ետ դարձավ աղջնակը ու կայնեցավ մամուն առաջքը, – հորթուկ մը ունեցանք, կովը հորթուկ մըն է բերեր, տեսնե՛ս, քթիկ ունի, դունչիկ ունի, տոտիկ ունի, Խաթումամ, պոչիկ ալ ունի, կովը կլգէ վրան, հարսիկս կայներ էքովը. Խաթումամ, եկուր երթանք, որ տեսնես:

Ու երախան հիացումի ճիչեր կարձակեր ու կպատմեր մամուն:

Հարսը, հորթը գրկած, հայտնվեցավ դարձյալ ու կայնեցուց սրունքներուն վրա: Դեռ թաց էր, կդողար, կմսեր:

– Որձ ալ է եղեր: Աստված պահէ՛ եզ մը կըլլա, – հարեց պառավը, նայելով հորթին վրա, – աղջի հարսնուկ, կդողա, բեր կոխէ թոնիրը, որ տաքնա:

Հարսը մթելը վերցուց, կոխեց թոնիրը ու ծածկեց դարձյալ:

Օճախին մեջ փայտերը ճարճատելով կվառեին՝ հալեցնելու համար
ձյունը: Աղբյուրները սառած էին, խմելու ջուր չունեին:

Աղջնակը նստավ իր տեղը ու տիկնիկը կրկին ձեռք առավ, պառավը
սկսավ մրափել թոնիրին գլեն, հորթը կտաքնար, լսվեցավ կովուն
բառաչյունը, որ իր հորթը կփնտրեր, հարսը եկավ, կայնեցավ ներքնակին
վրա, ու շուրթները փակ, ու մունջ շարունակեց մանելը, մինչ դուրսը
վերսկսավ ձյունը: